

Համարը N 411
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Ստեփանակերտ
Ստորագրման ամսաթիվը 16.11.2004
Վավերացման ամսաթիվը 16.11.2004
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 411

ք.Ստեփանակերտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 33-րդ կետը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է:**

Հաստատել **որոշողական** տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐՉԱՊԵՏ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004թ. նոյեմբերի 16-ի
թիվ 411 որոշման

Կ Ա Ր Գ

ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են **որոշողական** տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման հետ կապված հարաբերությունները և ջրօգտագործման գերակայությունները:

2. Սույն կարգի իմաստով **որոշողական** տնտեսությամբ զբաղվող է համարվում ջրային ռեսուրսներում կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության, բազմացման, վերարտադրության, կլիմայավարժեցման և որսի զարգացման համար ջրօգտագործող գործունեությունը իրականացնող անհատ ձեռնարկատերը, ֆիզիկական և իրավաբանական անձը (այսուհետ՝ անձ):

3. Յուրաքանչյուր անձ **որոշողական** տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսներն օգտագործում է ջրօգտագործման թույլտվությամբ (բացառությամբ անձնական կարիքների համար օգտագործման դեպքերի)՝ չխախտելով ջրերի ստանդարտները:

4. Սույն կարգով սահմանված թույլտվությունները տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

5. Անձը **որոշողական** տնտեսության կարիքների համար ջրային համակարգերն օգտագործելու դեպքում թույլտվություն է ստանում ջրային համակարգեր օգտագործող կազմակերպությունից՝ տեղակ պահելով ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության պետական լիազոր մարմին:

6. Հատուկ պահպանվող ջրային ռեսուրսներից ջրօգտագործումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով սահմանված կարգով՝ պահպանելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքով սահմանված ռեժիմները:

7. Կենդանական աշխարհի անհետացող կամ անհետացման եզրին գտնվող տեսակների բազմացմամբ զբաղվող անձն ունի ջրի բաշխման գերակայություն **որոշողական** տնտեսություն վարող ջրօգտագործող այլ անձանց նկատմամբ՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածի:

8. **Որոշողական** տնտեսություն վարող անձը ջրային ռեսուրսներն օգտագործելիս պարտավոր է պահպանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման նորմերն ու կանոնները:

ԼՂՀ կառավարության աշխատակա
զմի
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան